ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-ական թվականներ)

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կազմակերպվում են իշխանության մարմինները, այդ թվում՝ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԳԺԿ), որի ենթակայության տակ գործելու էր նորակազմ միլիցիան: 1920 թ. դեկտեմբերի 15-ին հիմնվում է ՀԽՍՀ բանվորագյուղացիական միլիցիան: Հաստատվում է միլիցիայի գործունեությունը կանոնակարգող «Կանոնադրութիւն բանվորա-գյուղացիական միլիցիայի»-ն, որտեղ նշվում է, որ աշխատակիցների համար կազմակերպվելու են «յատուկ դասընթացներ»[1]:

Խորհրդային իշխանությունները ձգտում էին կանոնավորել իրավապահ մարմնի ծառայությունը, սակայն բացակայում էր անհրաժեշտ ներուժը: Այս հիմնահարցը լուծելու միակ ճանապարհը նախկին աշխատակիցներին ծառայության ընդունելն էր, քանի որ հնարավոր չէր կարճ ժամանակում կազմակերպել դասընթացներ և պատրաստել որակյալ կադրեր: Ուստի հարկադրված էին ծառայության ընդունել նույնիսկ ՀՀ-ում ծառայած միլիցիոներների և սպաների[2]:

Ծառայության անցած միլիցիոներների, ինչպես նաև բնակչության զգալի մասը անգրագետ էր և կիսագրագետ, ուստի ՆԳԺԿ միլիցիայի գլխավոր վարչությունում հիմնվում է Քաղաքական քարտուղարություն, որը 4 ամսվա ընթացքում պետք է իրականացներ իրավապահների շրջանում անգրագիտության վերացումը[3]: Կատարված աշխատանքների շնորհիվ, ըստ պաշտոնական վիճակագրության, արդեն 1922 թ. միլիցիայի աշխատակիցների 85%-ն արդեն գրագետ էր[4]: Դա հնարավորություն է տալիս կազմակերպելու միլիցիայի և միլիցիայի պահեստի[5] հրամանատարական, ապա ուսումնական դաս-

---

[1] Կանոնադրությունը տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 116, ցուցակ 1, գ. 3, թ. 9:

[2] Լոգվինով Ի. 1975, Էջեր Սովետական Հայաստանի միլիցիայի պատմությունից, Երևան, 5, 20, Սարգսյան Ռ., Սահակյան Ռ. 2015, Հայաստանի ոստիկանության պատմությունից, մաս II, Երևան, 53-54:

[3] [3] Տե՛ս Բիլլետեն 1922, Ներքին գործոց ժողովրդական կոմիսարիատի (այսուհետև՝ Բիլլետեն), Երևան, N 5, 14:

[4] Апиян Н.А 1979, Развитие органов милиции Армянской ССР (1920-1975 гг.), Ереван, 53. Իրականում, ինչպես հետևում է Խորհրդային Հայաստանի կենտկոմի 1-ին քարտուղար Ա. Հովհաննիսյանի շրջաբերական նամակից, հազիվ 50%-ն էր գրագետ, տե՛ս Բյուլլետեն 1922, N 13-14, 22:

[5] Միլիցիայի պահեստը, որի հրամանատարական կազմը բաղկացած էր 6 հոգուց, կազմավորվել է 1922 թ. հունիսի 28-ին, որի ստորաբաժանումները կազմակերպվեցին գրեթե բոլոր գավառներում և նախատեսված էին պայքարել ավազակախմբերի դեմ, տե՛ս Բյուլլետեն 1922, N 13-14, 23: Այդ նպատակով էլ կազմակերպվեց միլիցիայի պա-

ընթացներ: ՆԳԺ կոմիսարիատը և Միլիցիայի գլխավոր վարչությունը կազմակերպում են վեցամսյա դասընթացներ, որտեղ ընդհանուր հանրակրթական առարկաների հետ դասավանդվում են մասնագիտական առարկաներ[6]:

1922 թ. հունիսին Հայաստանի գավառական գործադիր կոմիտեների վարչական բաժինների 2-րդ խորհրդակցության ժամանակ որոշում է ընդունվում հիմնել միլիցայի հրամանատարական դպրոց[7], որն իր պարապմունքները սկսում է 1922 թ. դեկտեմբերի 6-ին[8]: Դպրոցում ուսման տևողությունը լինելու էր 3 ամիս, և նախատեսվում էր ընդունել 40 հոգու[9]: Ուշագրավ է նաև այն փաստը, որ, հրամանատարական դասընթացներ բացելուն զուգահեռ, իրականացվում էին միլիցիայի աշխատակիցների կրճատումներ: Այսպես, որպեսզի ապահովվի դասընթացի վարչական կազմը, հանրապետության 4 գավառներից ծառայությունից ազատվեց 4 իրավապահ[10]: Արդեն 1922 թ. հանրապետության միլիցիայից հեռացվել էր 353 աշխատակից[11]: Մի շարք դեպքերում կրճատումները կատարվում էին հաշվի առնելով ոչ միայն աշխատակցի մասնագիտական թույլ կարողությունները, անցյալը, քաղաքական հայացքները, այլև անկուսակցական լինելը: Այսպես՝ 1922 թ. փետրվարի 11-ին Լոռու գավառի գործադիր կոմիտեն, ՆԳԺ կոմիսարիատի հրահանգի համաձայն, ծառայությունից հեռացնում է քրեական հետախուզության պետին, քանի որ նա կոմունիստական կուսակցության անդամ չէ: Սակայն գործադիր կոմիտեն մեկ այլ հրամանով նրան նշանակում է քննիչի պաշտոնում, քանի որ «Այդպիսի քննիչ մենք Լոռիում չենք կարող գտնել»[12]: Ինքնին հասկանալի է, որ միլիցիայում հայտնվել էին նաև պատահական մարդիկ, որոնք համընդհանուր գործազրկության պայմաններում աշխատանք չէին գտել, ուստի ծառայության էին անցել իրավապահ մարմնում: Նման օրինակ կարող են ծառայել երկու գյուղացիներ, որոնք, չկարողանալով ընդունվել Երևանի ուսումնական հաստա-

---

հեստ դպրոցը, որը պետք է կադրեր նախապատրաստեր վերը նշված ծառայության համար: Պահեստի միլիցիան փոխարինելու էր 1922 թ. հուլիսի 15-ին լուծարված Արտակարգ հանձնաժողովի դասակներին: Միլիցիայի պահեստի հեծյալ ստորաբաժանումներ կազմակերպվեցին գրեթե բոլոր գավառներում:

[6] Խորհրդային Հայաստան. 1920-1925, Հինգ տարի, Յերեվան, 1926, 65:

[7] 1921 թ. ապրիլի 21-ին ՆԳԺ կոմիսարիատի հրամանով վերանվանվել է միլիցիայի ուսումնական դպրոց, տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 3, գ. 230, թ. 3 և շրջ.: 1920-ական թթ. կեսերից ուսումնական հաստատությունը կրկին վերանվանվեց դպրոցի:

[8] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 760, թ. 37:

[9] Բիւլլետեն 1922, N 3-4, 9:

[10] Բիւլլետեն 1922, N 3-4, 23:

[11] Բիւլլետեն 1922, N 3-4, 11: Դա կազմում է անձնակազմի 30%-ը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 52, թ. 9:

[12] Տե՛ս Սարգսյան Ռ., Սահակյան Ռ., Հայաստանի ոստիկանության պատմությունից, 2015, էջ 49-ի թիվ 57 ծանոթագրությունը:

տություններից մեկը, ցանկություն էին հայտնել դառնալ միլիցիայի ուսումնական դպրոցի ունկնդիր[13]:

Նշենք, որ այսպես կոչված «զտումները» միլիցիայում շարունակվեցին նաև 1923 թվականին: Նման դեպքերում տեղական իշխանություններին խորհուրդ էր տրվում դիմել գավառներում գործող եռյակներին[14] և կուսակցական կազմակերպություններին[15]: Այս ամենի հետևանքով միլիցիան համալրվում էր կրթական ցածր մակարդակ և մասնագիտական համապատասխան որակավորում չունեցող շարքային ու հրամանատարական անձնակազմով:

Լինում էին դեպքեր, երբ այս կամ այն միլիցիայի պետը մեղադրվում էր կաշառակերության մեջ, սակայն նրան որևէ պատժի չէին ենթարկում, այլ մի գավառից մյուսն էին տեղափոխում: Այդպես էին վարվել Շամշադինի (Տավուշ) տեղամասի միլպետի հետ: Նրան տեղափոխել էին Քարվանսարա (Իջևան) նույն պաշտոնով: Նույն կերպ էին վարվել Իջևանի տեղամասի միլպետի հետ, որին տեղափոխել էին Շամշադին[16]: Պարզապես կատարվել էր կաշառակերների փոխատեղում: Նման կերպ ՆԳ մարմինները հեղինակազրկվում էին, և քաղաքացիների մեջ ցանկություն չէր առաջանում ընդգրկվել միլիցիայի դասընթացներում և ծառայել իրավապահ համակարգում:

Կարծում ենք, որ իշխանությունները ևս իրենց մեղքն ունեին, քանի որ խոստացել էին դասընթացների ունկնդիրներին ապահովել համապատասխան արտոնություններով, սակայն հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը հնարավորություն չտվեց իրագործելու խոստումը, ուստի դա էր պատճառներից մեկը, որ արդեն դասընթացներում ընդգրկվածներից ոմանք հրաժարվում էին շարունակել ուսումը: Այսպես, ունկնդիր Ներսես Մանուկյանը 1922 թ. դեկտեմբերի 9-ի իր դիմումում խնդրում է իրեն ազատել դասընթացներից՝ վկայակոչելով մի շարք պատճառներ, որոնցից գլխավորը 7 անձից բաղկացած ընտանիքի տնտեսական ծանր դրությունն էր[17]: Երկու այլ ունկնդիր հրաժարվել է շարունակել ուսումը՝ պատճառաբանելով հիվանդությունը[18]:

---

[13] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 772, թ. 8:

[14] Սույն հրամանը տրված է 1923 թ. հուլիսի 2-ին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 655, թ. 137, որից հետևում է, որ այսպես կոչված «եռյակները» գործել են ոչ թե տխրահռչակ 1937-1938 թթ., այլ ավելի վաղ: 1937 թ. «վերհիշեցին» չարաբաստիկ «եռյակների» և «երկյակների» մասին: Սակայն հայտնի չէ, թե ովքեր են հանդիսացել գավառական «եռյակների» անդամները: Կարելի է ենթադրել, որ կազմված են եղել գավառի կուսակական ղեկավարից, գործադիր կոմիտեի և արհմիության նախագահներից:

[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 655, թ. 137 և շրջ.: Պաշտոնական հաղորդագրությունում ասվում է, որ Լոռու գավառում ծառայությունից հեռացվել են նաև ՀՀ օրոք ծառայած ոստիկաններ, Բիլլետեն 1922, N 3-4, 7:

[16] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 756, թ. 21:

[17] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 757, թ. 10:

[18] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 758, թ. 29:

Արխիվային փաստաթղթերից հետևում է, որ ունկնդիրների զգալի մասը նույնիսկ կոշիկներ չուներ, ուստի չէր կարողանում մասնակցել դասերին[19]: Բացի այդ, խիստ անբավարար էր ունկնդիրների պարենի մատակարարումը: Այսպես՝ 1923 թ. մայիսի 12-ին ՀՍԽՀ Միացյալ բանվորական կոոպերատիվի վարչությունից դասընթացների ղեկավարությանը հայտնում են՝ եթե չստացվի համապատասխան քանակի ալյուր, ապա մայիսի 17-ից կդադարեցնեն հացի առաքումը[20]: Դասընթացի կոմիսարի զեկուցագրից տեղեկանում ենք, որ ունկնդիրների համար նախատեսված ուտելիքը խիստ աղքատիկ է, որը նույնիսկ հնարավորություն չի տալիս նորմալ ճաշ պատրաստելու[21]: Ինչպես նշում է դասընթացների ղեկավարությունը վերադասին ուղղված զեկուցագրում, մեկ կուրսանտի մեկամսյա ուտելիքի ծախսը 10 ռուբլի 20 կոպեկ է, որը 2 ռուբլի 10 կոպեկով է գերազանցում կալանավորի համար նախատեսված չափը, և դա այն դեպքում, որ ունկնդիրն ավելի շատ էներգիա է ծախսում: Սուղ պարենը հնարավորություն չի տալիս իրականացնելու արդյունավետ պարապմունքներ, քանի որ թերսնումը հանգեցնում է հյուծման՝ անդրադառնալով առողջության վրա: Գտնում են, որ ուտելիքի նորման պետք է հասցվի 15 ռուբլու, ինչպես ընդունված է զինվորական դպրոցներում[22]:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը գիտակցում էր, որ հանրապետությունում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի հետևանքով ավելանալու են քրեական հանցագործությունները: Ուսումնասիրությունները ցույց էին տվել, որ 1924 թ.՝ մեկ տարվա ընթացքում, հանցագործությունները աճել էին 150%-ով, ուստի ՆԳԺ կոմիսարի տեղակալ Բերբերյանը առաջարկում է ավելացնել բանտերում կալանավորների համար նախատեսված բանտախցիկները, իսկ Նոր Բայազետում (Կամո, Գավառ) բացել նոր «ուղղիչ-տուն – հատուկ մեկուսարան սոցիալապես առավել վտանգավոր կալանավորների համար»[23]: Այս ահազանգը վկայում է այն մասին, որ օր առաջ անհրաժեշտ էր իրավապահ մարմինը ապահովել մասնագիտական պատրաստականություն ունեցող միլիցիոներներով:

1925 թ. վերջին և 1926 թ. սկզբին Կոմկուսն իրավապահ մարմիններում իր գաղափարական ազդեցությունը և ներկայությունն ապահովելու նպատակով միլիցիա է գործուղում կոմունիստների մի ստվար խումբ: Դրա հետևանքով Երևանի միլիցիայի անձնակազմի 60%-ը, իսկ հանրապետական միլիցիայի աշխատակիցների 47%-ը կոմունիստներ և կոմերիտականներ էին: Քանի որ համալրումն ուներ գաղափարական ազդեցություն և հսկողություն ապահովելու նպատակ, ուստի ուշադրություն չէր դարձվում գործուղվողների կրթական մակարդակին: Ստեղծված իրավիճակը հարկադրում է, որ իշխանությունները

[19] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 759, թ. 26:
[20] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 776, թ. 1:
[21] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 783, թ. 3:
[22] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 785, թ. 6:
[23] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 131, թ. 25:

շտապ միջոցներ ձեռնարկեն իրավապահ մարմինը գրագետ և մասնագետ կրտսեր և ավագ հրամանատարական[24] կազմով ապահովելու համար, որը պետք է իրականացնեին կադրերի պատրաստման երկու հաստատություններ՝ միլիցիայի պահեստազորի դպրոցը[25] և հրամանատարական դասընթացների, որոնք, ինչպես արդեն նշել էինք, ոչ միայն մասնագիտական գիտելիքներ պետք է հաղորդեին, այլև ուսուցանեին գործավարություն՝ օգնելու կազմել հանցագործության, վկաների հարցաքննության վերաբերյալ տարաբնույթ արձանագրություններ: Այսպես, հրամանատարական դպրոցի հայոց լեզվի դասընթացներում սովորեցնում էին ոչ միայն գրագետ գրել[26], այլև գրում էին երևակայական հանցագործության մասին ստուգողական թելադրություններ և ստուգողական արձանագրություններ[27]: Այդկերպ ունկնդիրներին սովորեցնում էին կազմել դեպքի կամ պատահարի արձանագրություններ:

Ունկնդիրները ազատ ժամանակը տրամադրում էին ինքնագործ թատերական ներկայացումների համար: Այսպես՝ 1923 թ. հունվարի 22-ի երեկոյան ունկնդիր-ռեժիսոր Սերգեյ Լոռեցյանը բեմադրում է դեռևս 1890-ական թվականներից մեծ ճանաչում ունեցող Վ. Մադաթյանի «Կըռթ-Կըռթ» վոդևիլը: Ունկնդիրները կատարում էին տարբեր երգեր և ասմունքում[28]: 1923 թ. օգոստոսին կազմակերպվել են մի քանի էքսկուրսիաներ[29]: Գործել է գրադարան, որն ուներ 300 գիրք[30]: Սակայն հրամանատարական դասընթացների կազմակերպման աշխատանքներն ընթանում էին դանդաղ, անգամ ունկնդիրների հավաքագրումն արագացնելու նպատակով հրաժարվեցին սկզբնական շրջանի համար նախատեսված 40 հոգուց՝ ունկնդիրների թիվ սահմանելով 36-ը[31]: 1922 թ. դեկտեմբերի 12-ին հանրապետության միլիցիայի կոմիսար Ս. Գադակչյանը հատուկ հրամանով պահանջում էր կուրսերի պետից անմիջապես լրացնել ունկնդիրների թիվը[32], որը, մեր կարծիքով, դասընթացների պետի պարտականությունների մեջ չէր մտնում: Հրամանից հետևում է, որ սկզբնական շրջանում այնքան էլ ցանկացող չկար միլիցիայում ծառայելու: Այստեղ

---

[24] Միլպետներից ոմանք նույնիսկ չէին տիրապետում իրենց ծառայողական պարտականություններին: Նրանցից՝ Երևանի քաղաքային մասի միլիցիայի պետ Նաղդալյանին հայտարարվեց խիստ նկատողություն իր ծառայողական պարտականությունները չիմանալու համար: Նա առանց վերադասին տեղյակ պահելու ուղղակի դիմել էր ՆԳԺ կոմիսարին, տե՛ս Բյուլլետեն 1922, N 15-16, 24:

[25] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 785, թ. 112:

[26] Դասընթացներում ընդգրկվածների 90%-ը կիսագրագետ էր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 758, թ. 29:

[27] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 769, թ. 20 և շրջ.:

[28] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 769, թ. 3:

[29] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 779, թ. 9:

[30] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 783, թ. 3:

[31] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 756, թ. 38 շրջ.: Ավարտաշրջանին ունկնդիրների թիվը 31 էր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 774, թ. 169:

[32] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 760, թ. 8:

հաշվի առնենք նաև այն, որ խորհրդային իշխանությունը հրաժարվել էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունից և անցել էր Նոր տնտեսական քաղաքականության, որը տնտեսությունում մտցրեց շուկայական հարաբերություններ և ազդակ հանդիսացավ հանրապետության զգալի մաս կազմող գյուղացիության համար անարգել մշակելու հողը: Որոշ դեպքերում սա էր պատճառը, որ դասընթացները չէին համալրվում նախատեսված հաստիքներով:

1925-1926 թթ. հանրապետության գավառական կենտրոններում կազմակերպվում են ամենամյա երկշաբաթյա[33] և եռամսյա դասընթացներ շարքային միլիցիոներների համար, իսկ հրամանատարական կազմի համար՝ երկամսյա: 1926 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1927 թ. ապրիլի 20-ը ՆԳԺԿ-ին կից գործել է միլիցիայի կրտսեր կազմի դպրոց[34]: Մի շարք դեպքերում ՆԳԺԿ-ի կազմած ուսումնական ծրագրերը չէին համապատասխանում ստեղծված իրավիճակին, քանի որ ունկնդիրների զգալի մասը կիսագրագետ էր և սուղ գիտելիքներով չէր կարողանում հաղթահարել նախատեսված առարկաները: Այս հանգամանքի վրա է ղեկավարության ուշադրությունը հրավիրել 1924 թ. դեկտեմբերի 19-ի զեկուցագրում միլիցիայի և քրեական հետախուզության ենթաբաժնի պետ Հ. Դավթյանը. «ավելի նպատակահարմար է Հրամդպրոցի փոխարեն կազմակերպել միլիցիոներների դպրոց»[35] և կրճատել դասավանդվող առարկաների թիվը[36]:

1928 թ. հունվարին ՌԽՖՍՀ ՆԳԺԿ-ին կից հիմնվում են գիտատեխնիկական փորձագետների պատրաստման վեցամսյա դասընթացներ, ուր գործուղվում են նաև Հայաստանի իրավապահները:

1929 թ. սկսած՝ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ում ծառայող ադրբեջանցի միլիցիոներները, որոնք չէին տիրապետում հայերենին և ռուսերենին, ուսման համար գործուղվում են Ադրբեջանի ՆԳԽԿ-ին կից գործող միջին հրամանատարական կազմի համար նախատեսված դասընթացներում սովորելու:

Հոդվածի հավելվածում առաջին անգամ հրապարակվող փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Պահպանել ենք լեզվաոճական առանձնահատկությունները, բացառությամբ փաստաթղթերի իմաստը չաղավաղող լեզվական, ուղղագրական և կետադրական որոշ ուղղումների: Մեր միջամտությունները կատարվել են ուղղագիծ փակագծերով: Հրապարակված փաստաթղթերի վերնագրերը բնագրերինն են:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ՌՈՍՏՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

[33] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 691, թ. 11 և շրջ.:
[34] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 172, թ. 31:
[35] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 698, թ. 186:
[36] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 698, թ. 186:

Հավելված

N 1

ՀՍԽՀ ՆԳԺԿ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԾ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

ПРОЕКТ ПОЛОЖЕНИЯ О КУРСАХ КОМАНДНОГО СОСТАВА ПРИ ГЛАВНОМ УПРАВЛЕНИИ МИЛИЦИИ ССРА

10 апреля 1922 г.

г. Эривань

1. Курсы командного состава имеют своим назначением теоретически и практически подготовку милиционеров к занятию должностей до начальников уч[астковых] милиций включительно.

2. Срок обучения на курсах двухмесячный (желательно трехмесячный).

3. Штат курсантов не более 60 человек.

4. Командируемые на курсы должны быть грамотны (уметь бегло читать и писать и знать четыре правила арифметики), а также проходившие службу в красной или старой армии.

5. Командированные на курсы должны подвергнуться медицинскому освидетельствованию (лица, страдающие заразными болезнями или телесными недостатками на курсы не должны быть принимаемы).

6. В строевом отношении курсы представляют из себя полуроту.

7. Обслуживание курсов в хозяйственном отношении возлагается на отдел снабжения при Глав[ном]упр[авлении] милиции.

8. Курсанты расквартируются казарменным образом (расходы по подыскиванию и оборудованию казармы несет Г[лавное]У[правление]М[илиции]), внутренний распорядок на них устанавливается с соблюдением требований устава внутренней службы красной армии.

9. Все виды довольствия курсанты получают как ст[аршие] милиционеры.

10. Курсы разделяются на учебную и строевую части.

11. Руководство деятельностью курсов и ответственность за постановку всей работы на должную высоту лежит на начальнике курсов, назначенном нач[альни] ком Главмилиции[37] Республики.

12. Руководство политической работой на курсах принадлежит пом[ощнику] по полит[ической]части курсов, также назначаемого начальником милиции республики.

13. Руководство строевой работой принадлежит на[чальни] ку, а политической-помощнику.

14. Взводные и командиры [отделения] назначаются из числа курсантов.

---

[37] 1922 թ. հունիսի 28-ի ՀԽՍՀ ՆԳԺԿ կոլեգիայի որոշմամբ Գլխավոր միլիցիան վերանվանվել է ՆԳԺԿ միլիցիայի բաժին, տե՛ս Բյուլլետեն 1922, N 5, 16:

15. Преподавательский персонал курсов приглашается н[ачальни]ком и утверждается н[ачальни] ком милиции республики.

16. Оплата труда преподавателей производится по профессионально-тарифным ставкам из соответствующих кредитов Г[лавного]У[правления] М[илиции].

17. Прошедшие курсы подвергаются испытанию комиссией в составе: нач[альника] мил[иции] респ[ублики] (председатель) и двух членов по его назначению, после чего получают удостоверения об оказанных успехах с отметкой о должности, к занятию каковой они будут признаны комиссией подготовленными.

Зам[еститель] н[ачальни] ка [главного управления] милиции республики
[подпись неразборчива]

НАА, ф, 116, оп. 3, д. 138, л. 86. Подлинник. Машинопись.

N 2

ՀԽՍՀ ՆԳԺԿ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԾ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ПРОГРАММА КОМАНДНЫХ КУРСОВ

Копия
10 апреля 1922 г.
г. Эривань

Часть учебная

I. Предметы преподавания учебной части разделяются на 3 отделения: общее, специальное и политической грамоты.

Предметы преподавания общего отделения

1. Армянский язык.
2. Арифметика.
3. Основы географии.
4. Сов[етская] конституция и законодательство.
5. Законоведение.
6. Общие теории права: административного, гражданского и уголовного.
7. Форма советского судопроизводства.

Специальное отделение имеет своим назначением дать специальную подготовку для ком[андирского]состава милиции и всесторонне ознакомить их с вопросами, входящими в круг деятельности милиции, а также указать на ее взаимоотношения с другими органами республики.

Предметы преподавания

А. Органы административные.

1. НКВД, структура и круг его ведения.
2. Местные исполкомы и отделы управления их структур и круг работы.

3. Взаимоотношения исполкомов и отделов управления с узгоруправлением милиции.

Б. Органы охраны.

1. Милиция.

а) положение о милиции, б) структура милиции, в) милиция уездно-городская – сфера ее деятельности, компетенция и соподчиненность, г) милиция ж[елезно]/д[орожная] – ее органы управления, сфера деятельности, компетенция и подчинение и д) взаимоотношения между этими видами милиции.

2. Чрезвычайные комиссии, структура и компетенция.

В. Делопроизводство милиции.

1. канцелярское делопроизводство;

2. делопроизводство уголовно-юридического характера;

3. составление протоколов уголовного характера: опрос, дознание, удостоверение личностей, справка о судимости.

Г. Деятельность милиции.

1. борьба с преступностью и бандитизмом;

2. борьба с спекуляцией и запрещенной торговлей;

3. борьба с проституцией;

4. борьба с тайным винокурением и наркотизмом;

5. охрана порядка и спокойствия;

6. наблюдение за санитарным состоянием;

7. проведение в жизнь мероприятий по сбору налогов;

8. оказание содействия судебным и другим органам;

9. оказание помощи при различного рода несчастьях и стихийных бедствиях (спасение);

10. обязанности милиции при эпидемиях;

11. предоставление приюта подкинутым младенцам и больным;

12. проведение в жизнь декретов и распоряжений органов власти.

Уголовный розыск

1. Органы уголовного розыска в центре и на местах: назначение их, сфера их деятельности, компетенции и соподчиненность.

2. Общие сведения из теории розыска, методы регистрации преступников, дактилоскопия, фотография и др.

Курс политической грамоты (программа вырабатывается поли[тическим]секретариатом)

Зам[еститель] н[ачальни] ка глав[ного управления] милиции республики

[подпись неразборчива]

НАА, ф, 116, оп. 3, д. 138, л. 88 и об. Заверенная копия. Машинопись.

N 3

ՀԽՍՀ ՆԳԺԿ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՊԵՏԵՐԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ЦИРКУЛЯРНОЕ ПИСЬМО НАЧАЛЬНИКА ОТДЕЛА МИЛИЦИИ НКВД АРМЕНИИ ВСЕМ НАЧАЛЬНИКАМ МИЛИЦИИ ОБ ОТКРЫТИИ КОМАНДНЫХ КУРСОВ

N24/4822

21 августа 1922 г.
[г. Эривань]

В городе Эривани открываются командные курсы для подготовки милиционеров и сотрудников милиции Республики к занятию должностей до начальников участков включительно. Уведомляя об этом, сообщаю, что на курсы должны быть командированы сотрудники и милиционеры вверенного Вам уезда, умеющие бегло читать и писать по-армянски и по-русски, знающие все 4 арифметические действия, не старше тридцати лет (на местах их подвергнуть медицинскому освидетельствованию) или [с]телесными недостатками на курсы не могут быть командированы и проходившие службы в красной или старой армии. Командированные на курсы сохранят за собой жалованье и все виды довольствия на местах своей службы, а на курсах получают довольствие из общего котла. Командируются курсанты за счет соответствующих Узгормилиции в установленной форме. Курсы предполагается открыть к первому сентябрю. Срок обучения трехмесячный. Нижепоименованные уезды дают следующее число курсантов:

а) Эриванский 6 чел[овек], б) Алекпольский 6 чел[овек], в) Зангезурский 5 [человек].

г) Эчмиадзинский 5 [человек], д) Иджеванский 5 [человек], е) Н[ово]-Баязетский 4 [человека],

ж) Лорийский 3 [человека], з) Каракилисский 3 [человека], и) Даралагязский 2 [человека],

к) Мегринский 1 [человек].

Командированные должны быть снабжены всеми необходимыми документами (аттестатами и удостоверениями и проч.). Вполне возможно, что открытие курсов будет переведено на другой срок. Об открытии будете уведомлены телеграфно.

Выслать людей с таким расчетом, чтобы они приехали бы в город Эривань на два-три дня раньше назначенного времени[38].

---

[38] 1921 թ. փետրվարի 25-ին Հայաստանի հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը շրջաբերական հրամանում պահանջում է, որ գրագրությունը կատարվի միմիայն հայերենով, քանի որ ռուսերենով գործավարությունը «հեռացնում եւ խորթացնում է խորհրդային իշխանութիւնը ժողովրդական լայն մասսաներից», տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1,

Нач[альник] отдела милиции (Мирзоев)
Нач[альник] инспект[орского]п[од]/отдела (Худгарян)
Деловод: Хачикян [подпись]

НАА, ф. 116, оп. 1, д. 756, л. 37. Заверенная копия. Машинопись.

N 4

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՆԳԺԿ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ЦИРКУЛЯРНОЕ УКАЗАНИЕ ОБ ИЗМЕНЕНИИ СРОКОВ ОТКРЫТИЯ КОМАНДНЫХ КУРСОВ НКВД МИЛИЦИИ

N 1351

17 октября 1922 г.
г. Эривань

Во изменение и дополнение циркулярного распоряжения моего от 21 августа с. г. за N 24/4822 сообщаю, что комкурсы открываются 12 ноября с.г. в г. Эривани.

1. Прохождение курсантами в Красной или старой армии не обязательно, но желательно.

2. Жалованье и довольствие курсанты получают при курсах как старшие милиционеры (курсанты будут зачислены при отд[еле] милиции с 1-ого ноября).

3. На местах курсантов нужно исключить лишь со своих видов довольствия на срок прохождения курсов (командированных на комкурсы).

4. Курсанты должны быть командированы в новой, установленной отд[елом] милиции форме.

Исполнение остальных пунктов вышеупомянутого циркуляра обязательно.

Согласно постановлени[ю] коллегии НКВД от 12 сего октября уезды дают следующее число курсантов:

Эриванский [уезд] 5, Алекпольский [уезд] 5, Иджеванский [уезд] 4, Каракилисский [уезд] 2, Лорийский [уезд] 4, Эчмиадзинский [уезд] 4, Н[ово]-Баязетский [уезд] 4, Даралагязский [уезд] 2, Зангезурский 6.

Итого: 36

Для образования штата комкурсов: 1 начальник, 1 помощник, 1 делопроизводитель и од[ин] кашевар, итого – 4 человека, отделом милиции в нижепоименованных уездах сокращены по одному милиционеру:

գ. 3, թ. 41: 1922 թ. հուլիսին N 42 շրջաբերականում ՆԳԺ կոմիսար Հ. Կոստանյանը հիշեցնում է. «Չնայած այն հանգամանքին, վոր համապատասխան դեկրետով իր ժամանակին Հայաստանում պետական լեզուն հայտարարված է հայոց լեզուն, Գործկոմներից շատերը պաշտոնական գրությունը տանում են ռուսերեն լեզվով:...խնդրվում ե Ձեզ միջոցներ ձեռք առնել գրագրությունը տանելու հայերեն լեզվով, ռուսերենին դիմելով ծայրահեղ անհրաժեշտ դեպքում», տե՛ս Բիլլետեն 1922, N 3-4, 7:

Эриванский 1, Лорийский1, Даралагязский 1, Н[ово]-Баязетский 1

[Итого:] 4

Сокращение 4-х милиционеров в уездах провести с 1-го ноября. Одновременно с сим возбуждается ходатайство перед Нарком[атом]прод [овольствия] о сокращении числа едоков в уездах согласно вышеуказанной графе. Итого – сорок едоков. До особого телеграфного распоряжения не выслать курсантов. При высылке руководствоваться таким расчетом, чтобы курсанты прибыли бы в Эривань на три-четыре дня до открытия курсов.

Комиссар милиции С. Трдатян [подпись]

Нач[альник] отдела милиции Мирзоев [подпись]

Нач[альник] инспек[торского] п[од]/отдела Худгарян [подпись]

Секретарь Назаров [подпись]

НАА, ф. 116, оп. 1, д. 756 л. 38 и об. Подлинник. Машинопись.

N 5

ՄԵՂՐԻ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՆԳԺԿ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿՈՄԻՍԱՐ ԲԱԼՅԱՆԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 ապրիլի 1923 թ.

[ք. Երևան]

Գալով Յերևան ուսումներս շարունակելու, մեզ չհաջողվեց մտնել մեզ համար ցանկալի դպրոց և մնացինք գրեթե անխնամ:

Այժմ լսում ենք, վոր բացվում են Ներքգործժողկոմատին կից միլիցիոնական կուրսեր, ուր պատրաստվում են ավագ միլիցիոներներ:

Դիմելով սույն խնդրով Ձեզ, խնդրում ենք չմերժել մեզ ընդունելու այս կուրսերի մեջ, ուր մենք հնարավորություն կունենանք պատրաստվելու այն գործի համար, վորի իրականացումը նպատակ եք դրել Դուք:

Սորա հետ միասին խնդրում ենք թույլ տալ մեզ մինչ կուրսերի բացումը բնակվել միլիցիոներների ռեզերվի բնակարանում մեր հաշվով, վորովհետև գտնվում ենք գրեթե փողոցում:

Լևոն Գալստյանց [ստորագրություն]

Հովհաննես Մելիք-Ասլանյան [ստորագրություն]

Մենք՝ ստորագրյալ Հայ[աստանի] կոմուն[իստական] կուսակցության անդամներս երաշխավորում ենք, վոր Լևոն Գալստյանցը և Հովհ. Մելիք-Ասլանյանը միանգամայն հարմար են այդ կուրսերի համար և ապագայում ոգտակար կլինեն Հայաստանի Հանրապետության վարչական ասպարեզում:

1. Աշոտ Բաբայան, 2. Վարդան [այս և հետագա ստորագրությունները ընթեռնելի չեն]:

Մակագրություններ՝ «Д[ело] N 1», «В Учебную команду, Бальян [подпись], 13/IV-[19]23 г.»:

ՀԱԱ, ֆ.116, ց. 1, գ. 772, թ. 8: Բնագիր: Ձեռագիր:

N 6

ՀԽՍՀ ՆԳԺԿ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ПРИКАЗ НАЧАЛЬНИКА ОТДЕЛА МИЛИЦИИ НКВД АРМЕНИИ О ПЕРЕИМЕНОВАНИИ КОМАНДНЫХ КУРСОВ МИЛИЦИИ В УЧЕБНУЮ ШКОЛУ

N 147

21 апреля 1923 г.

[г. Эривань]

При сем объявляется копия приказа НКВД от 20 апреля с. г. за N 95, для сведения и руководства.

П[одлинный] п[одписал] начальник отдела милиции Бальян.

Начальник инспекторского п[од]/отдела С. Худгарян

С подлинным верно: секретарь Айрапетов [подпись]

Копия

Ком[андные] курсы милиции ССРА переименовать в учебную школу милиции с 20 апреля с.г.

Учебная школа находится при отделе милиции НКВД, в непосредственном ведении начальника отдела.

Начальнику отдела милиции – представить мне на утверждение не позже 20 апреля с.г положение, учебный план и штат учебной школы на утверждение.

Нормальные занятия в учебной школе милиции начать с 15-го мая с.г.

П[одлинный] п[одписал] Наркомвнут[ренних] дел (Амирханов)[39].

Начальник инспекторского п[од]/отдела Худгарян

С подлинным верно: секретарь Айрапетов [подпись]

НАА, ф. 116, оп. 3, д. 230, л. 3 об. Заверенная копия. Машинопись.

N 7

ՀԽՍՀ ՆԳԺԿ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՀՐԱՄԱՆԸ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ ԱՎԱՐՏԱԾՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ПРИКАЗЫ ОТДЕЛА МИЛИЦИИ НКВД АРМЕНИИ ОБ ПРИСУЖДЕНИИ КАТЕГОРИИ КУРСАНТОВ УЧЕБНОЙ ШКОЛЫ МИЛИЦИИ

N 243

20 октября 1923 г.

[г. Эривань]

При сем объявляется список курсантов учебной школы милиции, выдержавших экзамен по категориям.

---

[39] Ամիրխանյան (Ամիրխանով) Շավարշ (1894-1959), հեղափոխական, բոլշևիկ, ՀԽՍՀ ՆԳԺ կոմիսար (1921 թ. օգոստոս-1924 թ. մայիս):

I категория – надзиратели (командиры взводов):

1. Абрамян Оганес, 2. Карапетян Гарник, 3) Меликян Матевос, 4) Симонян Смбат, 5) Мартиросян Агаси, 6) Григорян Сурен, 7) Читинянц Амазасп, 8) Вартанян Ваган, 9) Степанян Александр, 10) Папьян Левон, 11) Багдасарян Егише.

II категория – старшие милиционеры (командиры взводов):

1) Осипов Семен, 2) Севликов Айк, 3) ХачатрянТоргом, 4) Григорян Седрак, 5) Агаян Арутюн, 6) Шакарян Цолак, 7) Оганесян Мамикон, 8) Мусаелян Назар, 9) Шаумян Карапет, 10) Месропян Гарегин, 11) Газарян Мисак, 12) Арутюнян Арменак, 13) Барсегян Агавард,

III категория - мл[адшие] милиционеры:

1) Шушоян Варос, 2) Симонян Саркис, 3) Мартикян Татевос, 4) Оганян Арутюн, 5) Манукян Арташес, 6) Галустян Левон.

П[одлинный]п[одписал] нач[альник]отд[ела] милиции (Бальян)

Нач[альник] инспек[торского] п[од]/отд[ела] (Худгарян)

Верно: секретарь отд[ела] (Карагедян) [подпись]

НАА, ф. 116.оп. 3, д. 215, л. 149. Заверенная копия.

N 8

ՄԻԼԻՑԻԱՅԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱԲԱԺՆԻ ՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՄԻԼԻՑԻՈՆԵՐՆԵՐԻ ԴՊՐՈՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 6342

19 դեկտեմբերի 1924 թ.

[Երևան]

Կազմակերպելով Պահեստի միլիցիան ավագ միլիցիոներների դպրոց և ունենալով 4 ամսյա դասընթացքների ծրագիր 9 առարկաներով, մենք հանդիպում ենք աչքի ընկնող խոչընդոտների՝ ինչպիսին են տնտեսականի բացակայությունը, կոնտինգենտի ցածր մակարդակը և այլն: Վերցնելով կուրս ավագ միլիցիոներներ պատրաստելու, հազիվ հնարավոր լինի պատրաստել վարժված միլիցիոներ, վորի համար հաշվի առնելով մեր ուժերը ու հնարավորությունները, նպատակ չունի անցնել այն առարկաները, ինչպես բնագիտություն, աշխարհագրություն և այլն:

Զեկուցելով վերոհիշյալի մասին կարծում եմ, վոր ավելի նպատակահարմար է Հրամ[անատարական]դպրոցի փոխարեն կազմակերպել միլիցիոներների դպրոց հետևյալ առարկաներով. 1) Հայոց լեզու, 2) Ռուսաց լեզու, 3) Քաղ[աքական] գրագիտություն, 4) Ռազմական գիտ[ություն], 5) Վարչական գիտելիք[ներ] և 6) Առողջապահություն, նպատակ ունենալով այդպիսով այդ դպրոցով անցկացնել գավառների միլիցիայի գոնե 50-60 տոկոսը: Դրանով մենք կկարողանանք բարձրացնել Հանրապետության միլիցիայի վարժությունն ու

ընդհանուր վորակը: Խնդրում եմ Ձեր կարգադրությունը և ցուցմունք շոշափված հարցի առթիվ:

Միլ[իցիայի] և Քրեական Յե[նթա]/բ[աժնի] վարիչ Դավթյան
[ստորագրություն]
Ճիշտ է՝ [ստորագրությունը ընթեռնելի չէ]

ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 698, թ. 202 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (բոլշևիկյան) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՇՏԱՊ. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

N 12381

21 օգոստոսի 1926 թ.
Յերեվան

Առաջիկա սեպտեմբերի 1-ից Յերեվանում Ներքգործժողկոմին կից վերաբացվում են միլիցիայի կրտսեր հրամանատարական կազմի դպրոցը, վորի նպատակն ե ուժեղացնել միլիցիայի շարքերը թարմ յեվ պատրաստի ուժերով:

Անցյալ տարիների փորձը ցույց տվեց, վոր գավառներից ուղարկված ընկերներն իրենց պատրաստականությամբ չեյին բավարարում դպրոցի պահանջներին: Պիտի աշխատել, վորպեսզի այս տարի ուղարկվելիք ընկերների թեկնածությունը լուրջ քննության առնվի, վորից հետո վորոշում կատարվի նրանց ուղարկման:

Ուղարկվող ընկերները անհրաժեշտ չե, վոր լինեն գավառակային միլպետներ կամ այլ աշխատակիցներ միլիցիայի շարքերից: Ցանկալի յե ընտրություն անել կուս[ակցական]խորհրդային դպրոցն ավարտած առաջադեմ ընկերներից:

Դպրոցն ունենալու յե հինգամսյա դասընթացք, այդ ժամանակամիջոցում ուսանողներին պետք ե ավանդեն հետեվեալ առարկաները՝ 1) Հայոց յեվ ռուսաց լեզուներ, 2) Հասարակագիտություն, 3) Խորհրդային սահմանադրություն յեվ խորհրդային իրավունք (քաղաքացիական, քաղաքացիական դատավարական, հողային աշխատանքի, անտառային, քաղ. կոոպ ակտերի յեվ ընտանյական իրավունքի որենսգրքեր, դատարանակազմություն), 4) Քրեական յեվ քրեական դատավարական որենքներ, հանցագործությանց հետախուզման գիտական տեխնիկա, 5) Վարչական իրավունք, վարչական մարմինների կառուցվածքը, նրանց ֆունկցիաները, միլիցիայի կազմությունը, նրա ֆունկցիաները, ծանոթությունը նրա գործունեությանը յեվ ներքին կյանքը կարգավորող կանոնադրություններն ու որինականացումները, 6) Դատական միլիցիա, սանիտարիա յեվ շուտափույթ օգնություն, 7) Աշխարհագրություն (հատկապես Հայաստանի), 8) Մետրիկական սիստեմը, 9) Ռազմաշարքային

պարապմունքներ (հրացան, ատրճանակ, գնդացիր, կարմիր բանակի կանոնադրությունները, հետեվակի յեվ հեծելազորի ծառայությունը յեվ տակտիկան):

Ուսանողներին պիտի ուղարկել Ներքգործժողկոմատի ադմինիստրատիվ վարչության տրամադրության տակ, հատկապես յենթարկելով ուղարկվողներին բժշկական քննության (վորոնք պետք ե համապատասխանեն կարմիր բանակայինների յեվ առաջադրվող առողջական պայմաններին) յեվ ստուգելով նրանց պատրաստականությունը հիշված ծրագիրը յուրացնելու համար, վերջին աշխատանքին ցանկալի յե մասնակից անել գավ[առի] դատախազին յեվ գավ[առի]միլպետին:

Անհրաժեշտ ե, վոր Յերեվանում լինեն սեպտեմբերի 1-ին, ընդունվելուն պես կը տեղավորվեն դպրոցի հանրակացարանում:

Ուսանողներն ապրելու յեն դպրոցում լրիվ պանսիոնով յեվ բացի դրանից ստանալու յեն ամսական 25 ռուբլի: Ավարտելուց հետո կուղարկվեն համապատասխան հիմնարկների հետ ծանթանալու համար Թիֆլիսում կամ Բագվում մեկ շաբաթով, վորից հետո շրջանավարտները կուղարկվեն միութենական աշխատանքների մեկ ամսով, վերջում ըստ իրենց ցույց տված ունակությունների, կը պահանջվեն համապատասխան պաշտոնի: Միլիցիական դպրոցն ավարտողները պարտավոր են միլիցիայում ծառայել առնվազն յերկու տարի:

Դպրոց ընդունվողը պետք ե 21 տարին լրացած լինի, իսկ բացառիկ դեպքերում, ֆիզիքապես յեվ մտավորապես լավ զարգացած լինելու պայմանով կարող են լինել յեվ ավելի ցածր հասակի, սակայն ոչ պակաս 18 տարեկանից:

Կ[ենտրոնական]Կ[ոմիտեի] Կազմբաշխ բաժնի վարիչի տեղակալ
Անանյան [ստորագրություն]
Ի. տ. Ներքգործժողկոմատի վարչ[ական] վարչության պետ՝ [Գ.]
Քալաշյան [ստորագրություն]

Մակագրություններ՝ «Պատասխանելիս հիմնվել մեր N-ի և թվի վրա: N 6412, 23.VIII.1926», «Ներք[ին]գործ[երի]ժող[ովրդական]կոմ[իսարիատ]»:

ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 790, թ. 1 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր: